«ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆՐ ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆԾԻ ԳԱՆ» ՂՈՒԿ. ԺԸ. 16։

ՀԱՏՈՐ ԻԶ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒԼԻՍ 1, 1897 ԹԻՒ 7

ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆ ՆՈՐՎԵԿԱՒԱՆ ԱԳԱՐԱԿԻ ՇԷՆԵՒ ՄԸ ՄԷՋ

Այս պատկերը կը ներկայացնէ ա-ւետարանիչ մը որ այս գարուն սկիզբ-ները Ա.ետարանը կը քարոզէ Նոր-վեկիոյ մէջ խումբ մը դրացիներու, որոնք իրիկուան դէմ ագարակի չէն-քի մը մէջ ժողովուած են։ Եկեղե-ցական պատմութեան տեղեակ եղող-ներուն կը յիշեցնէ առաջին երեք դարերուն մէջ ընդհանրացած բան մը, նաև կը յիշեցնէ չատերուն որ այս թերթը կը կարդան՝ այս երկրին մէջ տեղնուած տեսարանները։ Քրիս-տոսի Ա.ետարանը, անոր վերկու-թեան բարի լուրը, պէտք է որ հրա-տարակուի ամէն տեղ։ Եւ ամէն տեղ անոնք որ զանիկա կ'ընդունին ան-կեղծ հաւատքով, իրենց անձնական փորձառութեամբ ճշմարտապէս կը դանեն կենդանի հոգ, անոր քարոզու-թիւնը թէ՛ լսեն եկեղեցիի մէջ, թէ՛ լսեն տան մէջ։

«ԱՆՄԻՋԱՊԷՍ ԼՈՒՐ ԿՈՒ ՏԱՄ»

(Աղբէր դաս մը)

Յամանակաւ մեծ թագաւոր մը իր հպատակներուն հրամայեց որ իրեն համար կտաւ և կերպասներ դործեն։ Թագաւորը ինք անոնց տուաւ մե-տաքսը, բուրդը և օրինակները, և կը սպասէր որ իր ժողովուրդը ժրաջա-նութեամբ աշխատէին։ Եւ ոմանք ինք չատ համբերող և ներող էր, և քանի էր անոնց թէ ե՛րբ որ դժուա-րութեան հանդիպին իրեն լուր տան. և ինք պիտի օգնէ անոնց։ Նաև քանի էր որ երբեք չվախնան թէ գինք կը ձանձրացնեն, այլ օգնութիւն և հրա-հանգ խնդրեն։

Աչխատող բազմաթիւ մարդոց և կիներուն մէջ պզտիկ աղջիկ մը կար։ Ասո՛ր ալ դործ տուած էր Թագաւորը անոր պզտիկութիւնը արդելք չեր պելով։ փոքրիկ աղջիկը չատ անդամ մինակ կ՚աչխատեր ղուարթութեամբ և հաճելութեամբ։ Օր մը, երբ մարդիկը և կիները մեծ նեղութիւն կը ղդային իրենց անյաջողութիւններուն և ըրած սխալներուն համար — վասն զի մետաքսները կը կնճռոտէին և դործուած կտաւները և կերպասները տրուած օրինակին պես չէին — փոքրիկ աղջկան երևան և ըսին. ‘‘Ըսէ մեզի, ինչէ՞ն է որ դուն այչափ ուրախ ես գործիդ մէջ. մենք միչտ դժուարութիւններու մէջ ենք։’’ ‘‘Որեմն ինչո՞ւ համար Թագաւորին լուր չէք տար. ինքն ըսաւ Թէ լուր տանք իրեն,’’ պատասխանեց փոքրիկը։ ‘‘Մենք լուր կու տանք իրիկուն և առաւօտ։’’ ‘‘Ո՛հ,’’ ըսաւ աղջիկը, ‘‘բայց ես երբ փոքրիկ դժուարութիւն մը ունենամ, մինչև իրիկուան չեմ սպասեր, անմիջապէս լուր կու տամ և օդնութիւն կը խնդրեմ։’’

ՓՈՔՐԻԿ

Քիչ քաղաքներ կան Ամերիկայի մէջ որոնք կրնան հին քաղաք կոչուիլ։ Բայց Փոխիպէք ամենէն հինն է, և ակէ 150 տարի առաջ Ամերիկայի ամենէն հարուստ քաղաքներէն մէկն էր։ Այն բարձր տեղին վրայ որ Աբրահամու Բարձունք կը կոչուի, և ուրկէ առնուած է այս պատկերը, 1759 Նոյեմբերին Դաղիայի և Անդլիայի զինուորներուն մէջտեղ մեծ ճակատամարտ մը եղաւ որ մեծ աղդեցութիւն ունեցաւ Դաղղիոյ և Անդլիոյ բռնած դիրքերու մասին Հիւսիսային Ամերիկայի մէջ, վասն զի այդ ժամանակէն ի վեր առաչնութիւնը Անգլօ-Սաքսոն յեղին ստացաւ։ Այս քաղաքը այն ատեն աւելի քաղաք մըն էր, և մինչև հիմա ալ այնպէս է։

Բայց հիմա, ոչ Թէ պատերազմը, այլ՝ ուսումը և արուեստները կը ծաղկին այս քաղաքին մէջ։ Հոն կայ մեծ համալսարան մը, փառաւոր եկեղեցիներ, մատենադարաններ և հանրային ուրիշ չէնքեր։ Բնակութեան համար հաճելի քաղաք մըն է։ Շինուած է Սր. Լաւրենտիոս մեծ գետին վրայ, և չրջապատուած է դեղեցիկ տեսարաններով։ Փուիլէքի ձմեռները խիստ են և երկայն. չատ ցուրտ և սառնամանիք կ՚ըլլայ հոն, բայց ամառները հմայիչ են։

ՓՈՔՐԻԿ ԱՂՋԿԱՆ ՄԸ ՏԱՐԱԾ ՅԱՂԹՈՒԹԻՒՆԸ

Մայր մը իր փոքրիկ աղջկան համար լերաւ ծրար մը չաքարեղէն, և անոր տալէ ետքը այնչափ որչափ որ աղէկ էր մէկ անդամ ուտելու համար, ծրարը պահանոցին վերի դարակին մէջ դրաւ և ըսաւ Թէ այդ օրուան մէջ առէք աւելի ուտելու չէ։ Մայրը տան վերի յարկը ելաւ և ժամանակ մը ետքը նորէն վար իջնելով եկաւ բայց դրան առջև սենեակին ուր չաքարեղէնները դրած էր։ Եւ ի՞նչ տեսաւ կը կարծէք։ Տեսաւ իր փոքրիկ աղջիկը որ կայնած էր պահանոյին դարակին մէջ, չաքարեղէնի ծրարը բացած և կտոր մը իր ձեռքը բռնած։ Մայրը անոր պոռալու վրայ էր, բայց տեսնելով որ փոքրիկը սպասեց քիչ մը իրը Թէ մտածելով բանի մը վրայ, կեցաւ հասկնալու համար Թէ ի՛նչ պիտի ընէր աղջիկը։ Մեծ եղաւ մօրը երջանկութիւնը երբ տեսաւ որ փոքրիկ աղջիկը տեղը դրաւ չաքարեղէնները, և դարակէն վար աթոռի մը վրայ և աթոռէն վար գետինը իջնելով վեր նայեցաւ ղուարթ ժպիտով, և իր ոտքը գետինը զարնելով ըսաւ, ‘‘Ուրախ եմ որ չկերայ։’’

Մեծ յաղթութիւն էր այդ։ Ոհ, աղաք, ամէն մէկդ Աստուծոյ վրայ մտածեցէք ամէն անգամ որ մեղանչելու կը փորձուիք, և դուք ալ այսպիսի յաղթութիւններ պիտի ընէք։

Բայց Սատանային դէմ կռուելու ամենէն աղէկ ժամանակն է այն՝ երբ առաչին անդամ չար խորհուրդ մը կը Թելադրէ։ Այս փոքրիկ աղջկան համար չատ վըտանգաւոր էր այսչափ մօտենալ չարութիւն գործելու։ Ամէն աղէկ պիտի ըլլար եԹէ փորձուԹեան իր առջևը եղած առեն չիտակ դուրս վազէր սենեակէն իր սրտին մէջ ըսելով, ‘‘Ոչ, ոչ.’’ և երԹար իր խաղերուն, որպէս զի ուրիշ բանի մը վրայ խորհէր։ Ամստուածաչունչին ամենէն օգտակար աղօԹքներէն մէկը կը գտնուի ՃԻԹ. Սաղմոսին 37 հատարին մէջ. ‘‘Վատ դալէուր իմ աչքերուս, որ մեռոի բան չտեսնեն։’’

Մինչ ըրէք այս աղօԹքը երբ չար խորհուրդ մը կը Թելադրուի ձեր տեսած կամ մտածած բաներուն, և Սատանան կարող պիտի չըլլայ ձեղի բռնի մեղանչել տալ։

ԲԱՆՏԱՐԿԵԱԼԻ ՄԸ ԽՐԱՏԸ

Սինկ Սինկ անուն բանտին մէջ, որ Ամերիկայի ամենէն մեծ բանտերէն մէկն է, կայ Ներուն մարդ մը որ հոն բանտարկուած է դրեԹէ քառորդ դարէ ի վեր։ Մաղերը ճերմըկած են, և իր հասակը որ առենով նոճիի մը պէս ուղիղ էր, ծռած է տարիքէն և յոդնութիւնէն։ Յամառնակաւ իր բնիկ քաղաքին երիտասարդաց ղուարթ խումբին պետն էր, և խումբին սիրելի և նախանձելի մէկ անդամը։ Իր յաչողութեան ամենէն բարձր կատարը գտնուած առենը ինկաւ, այսինքն մեծական դումար մը դողցաւ, և ուստի բանտարկութեան դատապարտուեցաւ։ Հետադան խօ-

սած է ինքը այցելուի մը։

«Պատիժիս պայմանաժամը չուտով պիտի լրանայ և ազատ պիտի արձակուիմ։ Եւ սակայն ապրելու քի՛չ տարիներ ունիմ, վասն զի ծերացած եմ հիմա. բայց որոշած եմ այդ տարիները անցընել պատանիները և երիտասարդները յորդորելով և խրատելով որ մեղանչական ճամբաներէ դգուշանան։ Ամէն բանէ աւելի պիտի յորդորեմ զանոնք որ իրենց խիղճը վախուկ և զգայուն պահեն. վասն զի եթէ անգամ մը կարծրանայ և խանձուի, ա՛լ կորսուած են։ Ջեմ կարծեր թէ ես հոս պիտի ըլլայի այսօր, եթէ ականջ դնէի խղճիս ձայնին որ կը խօսէր ինծի տղայութեանս առեն։ Երբ առաջին ոճիրս գործեցի, տասներկու տարեկան էի։ Պզտիկ եղբօրս ստակի փոքրիկ տուփը կոտրեցի, և դողցայ մէջը պարունակուածները — միայն քանի մը դահեկան։ Բայց այդ գործս խստացուց դիս, այնպէս որ մեղք գործելը հետզհետէ աւելի դիւրին կու գար այնուհետեւ։ Եթէ ականջ դնէի խղճիս ձայնին, որ խօսեցաւ ինծի երբ փորձուեցայ բանալ այն թիթեղեայ փոքրիկ տուփը, և յաղթէի փորձութեան, կարծեմ ես ոճրագործ մը պիտի չըլլայի և տասը տասներկու ընտանիքներ աղքատութեան և խեղճութեան մէջ պիտի չգտնուէին որ իմ կեանքս անցընէի նախատինքի և յոգնութեան մէջ։ Հարցուցէք այս չէնքին մէջ բանտարկուած ամէն մէկուն, թէ ինչո՛ւ հոս կը գտնուին, և ինծի պէս պիտի ըսեն թէ պատճառը մանկութեան տարիներու մէջ իրենց խղճին խստացած և խանձուած ըլլալն է։»

Մարդկային սրտին նման այսպիսի զգայուն բանի մը վրայ ծնայուն տպաւորութիւն մը թողլու համար բաւական է շատ թեթեւ ազդեցութիւն մը։ Փոքրիկ Թռչունը, որ անհաշուելի դարեր առաջ գետեզերքի կակուղ շաղախին վրայ կը քալէր, թողած է հետք մը որ այսօր կը տեսնուի կարծրացած քարին վրայ։ Պաերին (Բրէմի ծնո.) փափուկ տերևը որ տարիներ առաջ իր յօղունին վրայէն ինկաւ ճեղքուած հերձաքարերուն և քարացած հանքածուխներուն մէջ, այսօր կը ցուցնէ իր հետքերը իր բոլոր ուռկանաձև երակներով։ Այսպէս է մանկութեան օրերու սիրտն ալ. երբ կ'ընդունի տպաւորութիւն մը, թեպետ շատ փափուկ, անոր հետքերը կ'ըլլան մնայուն բարութիւն կամ չարութիւն։ Կանուխ ժամանակուան փորձութիւնները, երբ անյաղթելի կը կը ներ, յաւիտենական հետքեր և նշաններ կը թողուն մարդուս նկարագրին վրայ այնպէս խոր և անջնջելի, ինչպէս փոքրիկ թռչունին թաթերուն հետքերը՝ ժայռին վրայ։

ԹԻՊԵԹՅԻ ԱՂՋԻԿ ՄԸ

Շատ բան չենք գիտեր Ասիոյ կեղրոնը գտնուած այն երկրին վրայ որ Թիպէթ կը կոչուի, ոչ ալ անոր բնակիչներուն, Թիպէթցիներուն, վրայ։ Անգղիացի տիկին մը, Իզապէլլա Պիշըփ, ճամբորդած է այդ երկրին մէջ, և անոր և անոր բնակիչներուն վրայ գիրք մը գրած է որուն մէջէն կ'առնենք Թիպէթցի աղջկան մը այս պատկերը։

ԵՐԿՈՒ ՓԱԽՕՂՆԵՐ

Բոյնի մը մէջ սկիւռի չորս ձագեր կային։ Ընտանեմէ մէկը, երբ իրենց ծնողները բոյնէն հեռացան ընտանիքին կերակուր ճարելու համար, անմիջապէս ըսաւ միւսներուն, «Ես բաւական մեծցած եմ, և հիմա կրնամ ինքզինքս հոգալ,» և դուրս ելաւ բոյնէն։

Անկէ ժամ մը առաջ Աբշամ, հակառակ իր ծնողաց հրամանին, առանձին իրենց ամարանոցին վրանէն դուրս ելած էր, հետը ձող մը, կարիճ մը և լար մը առնելով, և գացած էր ցուրտ և սրընթաց գետի մը եղերք ձուկ բռնելու համար։ Հետ առած էր նաև տուփ մը, մէջը խայծ (պաւէտ եէմ) դրած, և այնպէս պատահեցաւ որ փոքրիկ սկիւռը՝ բոյնէն դուրս ելլելէն քիչ ետքը Աբշամի լարին ծայրը կըցուած տեսաւ փոքրիկ կապոյտ և կարմիր բան մը որ ողորկ ժայռին վրայ կը թաւալէր։ Վասն զի Աբշամ ձուկ բռնելէ ձանձրացած՝ հիմա իր լարին հետ կը խաղար։

«Ահա ղուարճալի բան մը,» ըսաւ սկիւռին ձագը ինքնիրեն, և սկսաւ խաղալ անոր հետ ինչպէս կատուի ձագ մը կը խաղայ մանածի կծիկի մը հետ։ Աբշամի համար այս բանը ձուկ բռնելէն շատ մը աւելի լաւ զբօսանք մըն էր։ Անչափ բարձրաձայն խնդացող սկիւռին խաղերուն համար՝ որ անտառները արձագանգ կու տային։ Բայց մինչ լարը կը ճօճէր, կարիճը փոքրիկ սկիւռին կուշտէն մորթին մէջ մնաւ, և Աբշամ կարիճով ձուկ քաշած պէս ցամաք քաշեց զայն։

«Ո՛հ, ի՜նչ աղէկ բան պիտի ըլլայ եթէ տուն տանիմ,» ըսաւ Աբշամ և, տուփին մէջէն խայծերը պարպելով և մէջը օդ բանելու համար կափարիչին վրայ ալ ծակ մը բանալով, փոքրիկ սկիւռը հոն դրաւ, զգուշութեամբ անոր մնին մէջէն հանեց կարիճը, թեպետ այսպէս ըրած ժամանակը սկիւռը կը ճուաւր վախէն և ցաւէն. և բոլոր ատենը որ տուփին մէջ դրուած Աբշամի բնակարանը կը տարուէր, կ'ըսէր ինքնիրեն, «Երանի՜ թէ այս առաւօտ ես իմ դիտուս գործի չերթայի։»

Գալով Աբշամի, սկիւռին միսը մըտնող նոյն կարիճը կերպով մը իր բթամատին մոտ տեղը մաաւ. և ինք չկրցաւ անկէ հանել թեպետ շատ աշխատեցաւ։ Ուստի բոլորովին երջանիկ չէր։ Կը խորհէր ինքնիրեն, «Երանի՜ թէ անհնազանդ եղած չըլլայի մօրս, և ճամբայ ելաւ տուն երթալու. բայց բլուրին միւս կողմէն իջնել սկսաւ, և մինչ մայր սկիւռը իր բերնով բերած մսացօրինը կը բաժնէր երեք ձագերուն՝ վեհանակ չորս ձագերու բաժնելու, անդին Աբշամի մայրը և իր դրացիները իրենց վրաններէն և խրճիթներէն ելած՝ կը պարտէին մերձակայ բլուրներուն վրայ և խոյտունկ, վտանդաւոր հեղհեղատներուն մէջ «Աբշամ, Աբշամ» աղաղակելով, և պատասխան չընդունելով բայց միայն իրենց աղաղակներուն արձադանգները։

Մինչև որ գտան, գիշեր եղաւ։ Աբշամ գտնուեցաւ գետակի մը եղերքը պառկած և քնացած, իր կարիճին ձողը ծայրին մօտէն կոտրուած, լարը դեռ կարող եղած չէր քակել կարիճը։

թէն, ուռած ալ ձեռքին փաթթուած էր, կօշիկները մաշած, հանդերձները դէշ կերպով պատռած էին, բայց ինքը տակաւին բռնած էր տուփը, որուն մէջ խեղճ, անօթի սկիւռը ի զուր պատերը կը ճանկռթէր դուրս ելլելու համար։

Սկիւռին ձագը երբեք չդարձաւ իր ծնողներուն, և Ձրչամ ըսաւ թէ մեյ մըն ալ պիտի չվախչէ. խոստում մը՝ զոր իր ցաւած ձեռքը միտք պահել տուաւ մինչև որ ինք իր սկիւռին հետ ամարանոցէն քաղաք դարձաւ։

ՎԱԽՑԱԻ ՆՈՑՆ ԽՕՍՔԵՐը ԲԵՐՆԷՆ ՀԱՆԵԼՈՒ

Երդնուլ և հայհոյել իրենց ունակութիւն ընողները չեն կրնար իրենքզիրենք արդարացնել, ըսելով թէ անոնց նշանակութեան վրայ չեն խորհիր երբ կը հանեն իրենց բերաններէն։ Սայսպիսիները ահով ու դողով պիտի լեցուին եթէ յանկարծ դէմ առ դէմ դանուին Աստուծոյ հետ։

Քարոզիչ մը, երբ անգամ մը լսեց որ դործաւոր մը սոսկալի երդումներ և հայհոյութիւններ կը հաներ բերնէն իր ընկերներուն առջև, ըսաւ ա՜նոր թէ «դուն վախկոտ ես սակայն. դիւրին է հոս ընկերներու առջև ընել այդպէս, բայց ոչ՝ երբ առանձնութեան մէջ կը դտնուիս։» Մարդը պատասխանեց թէ իրեն համար տարբերութիւն մը չէր ըներ բազմութեան կամ առանձնութեան մէջ գտնուիլը, ոչ ալ ժամանակը կամ տեղը։

«Բեղի ոսկի մը կու տամ, եթէ կրնաս դիշերին երթաս դերեզմանատուն և, երբ Աստուծոյ հետ մինակ կը դըտնուիս հոն, ըսես նոյն չար խօսքերը,» ըսաւ քարոզիչը։

«Շատ աղէկ, ալ ի՛նչ կ՚ուզեմ ես թէ այդպէս դիւրին կերպով ոսկի մը չահիմ,» պատասխանեց մարդը։ «Լաւ, ուրեմն վաղ առաւ լինծի եկուր և իմացուր թէ ըսուածին պէս ըրա՛ծ ես,» ըսաւ քարոզիչը։

Կէս դիշերը հասաւ. մարդը դերեզմանատուն գնաց։ Շատ մութ դիշեր մըն էր։ Երբ մարդը գերեզմանատունէն ներս մտաւ, ձայն ձուն չկար. մեռեալ լռութիւն մը կը թագաւորէր։ Այնատեն քարոզչին «Աստուծոյ հետ մինակ» բառերը անոր միտքը եկան զարմանալի ազդեցութեամբ։ Իր ամբարշտութիւն ըրած ըլլալը և նոյնը նորէն կրկնելու յանդգնութիւնը կայծակի պէս միտքը գալով, դողդոջ իր յիմարութեանը վրայ և ուրիշ բան կարող չեղաւ ընել, բայց եթէ՝ ծունկերուն վրայ իյնալ և փոխանակ այն ամբարշտական բառերը բերնէն հանելու՝ սրտանց աղաղակել, «Աստուած, ողորմէ ինծի մեղաւորիս։»

Հետեւեալ օրը քարոզչին գնաց, չնորհակալ եղաւ անկէ իր առաջարկած փորձին համար, և որոշեց որ այնուհետեւ ա՛լ այնպիսի չար և յիմարական խօսքեր չհանէ բերնէն։

ԱՐԻԱՍԻՏ ԿՈՑՐը

«Միշտ ըրէ այն բանը զոր կը վախնաս ընել,» ըսաւ անգամ մը իմաստուն մարդ մը իր տղուն։

Քաջութեան շատ տեսակները կան։ Համբերութեան քաջութիւնն է որ ընդհանրապէս կը պահանջուի կինեբէն և որուն մէջ անոնք յաճախ կը գերազանցեն։ Քաջութիւնը կռուիլ և ուրիշներն սպաննել չնշանակեր միշտ։ Բանի մը տարիներ առաջ փարիզի փողոցներուն մէջ կռիւ մը պատահեցաւ։ Ժողովուրդը գետնի սալայատակները քակելով պատնէշներ չինեց անոնց քարերէն, իր առջև եղած կառքերը և սայլերը խորտակելով բլուրներու պէս դիզեց ճամբաներուն վրայ իբրև պատնէշներ թշնամիներուն դէմ։ Երկու հակառակորդ կողմերէն շատեր սպաննուեցան կամ վիրաւորուեցան։ Բայց կային քանի մը բարի կիներ, Գթութեան Քոյրեր կոչուած, որոնք չվախցան պատնէշներուն մօտենալ, և եթէ տեսնէին սաստիկ վիրաւորուած մէկը, մէկ կողմ կ՚առաջնորդէին կամ կը տանէին և կը չանային բուժել անոր վէրքերը։ Մարդ մը պատնէշին դադարէն վար դլորեցաւ, վասն զի զարնուեցաւ իր երկու սրունքներէն, այնպէս որ անկարող էր շարժելու։ Ուրիշ մարդ մը, որ թշնամի կուսակցութենէն էր, տեսնելով որ նա տակաւին ողջ էր, վեր առաւ իր հրացանին սուինը խոցելու և սպաննելու համար զանիկա որ իր առջև պառկած կը կենար։ Յանկարծ զդաց որ մէկը բռնեց իր բազուկէն, և երբ բարկութեամբ չորս կողմ կը նայէր թէ ո՛վ էր, տեսաւ որ Գթութեան Քոյրերէն մէկն էր որ իր քովը կը կայներ թրջուղ գնտակներուն և չորացող սուրեբուն մէջտեղը։ «Կեցիր,» աղաղակեց կինը հրամայական ոճով մը, «անոր չդպչի՛ս, ինծի վերաբերեալներէն է, վիրաւորուած է, և բոլոր վիրաւորուածները լման են։» Մարդը զարմացաւ կնոջ այս քաջութեանը վրայ, ղէնքը վար ձգեց ձեռքէն, և արիասիրտ կինը պատնէշին քովէն մէկ կողմ տարաւ այն վիրաւորեալը, և այսպէս ազատեց անոր կեանքը իր կեանքը վտանգի մէջ դնելով։

ՓՈԽԱԴԱՐՁ ՍԷՐ

Փոքրիկ Նուարդ իր պապիկին հետ կը խաղար մինչ մայրը դիր կը գրէր։ Երբ մայրը գիրը լմնցուց, «եկուր գիրկըս,» ըսաւ Նուարդի։ «Ո՛հ, ո՛րչափ ուրախ եմ. ես քեզ շատ սիրելու եմ, մայրիկ,» պատասխանեց Նուարդ։ «Ընդա՛ռ, սիրելիս,» և ղանիկա գուրգուրանքով սեղմեց իր կուրծքին վրայ, «շատ ուրախ եմ որ իմ փոքրիկ աղջիկս դիս ա՛յսչափ կը սիրէ։ Բայց կարծեմ այնչափ առանձին չդդացիր ինքզինքդ երբ դիր կը գրէի։ Դուն և պապիկը երջանիկ ժամանակ անցուցիք մեկտեղ, այնպէս չէ՞։» «Այո, մայրիկ, բայց առենէ մը հարը ձանձրացայ սիրելէ։» «Ինչո՞ւ,» հարցուց մայրը։ «Ո՛հ, անոր համար որ ան դիս փոխարէն չսիրեր։» «Ես այդ է պատճառը որ դիս կը սիրես։» «Պատճառին մեկըատ է, բայց ոչ թէ առաջին պատճառը, ոչ ալ լաւագոյն պատճառը։» «Ուրեմն ո՞րն է առաջին և լաւագոյն պատճառը։» «Զի՞ս կհարցնես, մայրիկ,» ըսաւ փոքրիկ աղջիկը, իր կապոյտ և պայծառացած աչքերը մեկնելով. «անոր համար որ դուն դիս սիրեցիր երբ ես այնչափ փոքր էի որ չէի կրնար փոխարէնը սիրել քեզ. այս է պատճառը որ քեզ շատ կը սիրեմ։»

Շատ աղէկ պատճառ մըն էր ասիկա. և մինչև անգամ մայրիկն ալ չէր կրնար անկէ աւելի աղէկ պատճառ մը տալ։ Այդ է նաև պատճառ մը թէ մենք ինչո՛ւ սիրելու ենք Յիսուս Քրիստոսը. «ինչու որ առաջ անիկա մեզ սիրեց,» և մեռաւ մեզ փրկելու համար մեր մեղքերէն։

ՀԱՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԴԻՐՔԷՆ

ՍՈՂՈՄՈՆԻ ՄԷԿ ԱՌԱԿը

Որ կը բաղկանայ Եօթանասունևեւութ տառերէ

38 1 45 30 54 61 14 12 71 18 7 74 *Թողուցէք որ ապրիք։*
10 37 9 13 20 5 59 42 56 11 15 *օրհնութիւնով քաղաքը կը բարձրանայ։*
34 17 62 60 19 50 4 65 *Լուրերը անոյշ են։*
22 44 57 47 53 52 32 69 26 64 *Հովը անձրեւը կը ցրուէ։*
41 25 46 31 66 29 63 24 2 68 78 *Օձին ճամբան։*
75 67 8 76 23 11 *Ժամանակ կայ։*
70 3 49 37 20 21 *Արդարին [illegible]*
16 77 33 36 14 55 35 2 *Մարդ մը կար որ ապրեր մեռնելու։*
27 73 48 17 52 39 *Մեղ մեր [illegible]*
40 4 72 58 28 *Դրէք անոր [illegible]*

Կ. պոլիս ՅՈՎՍԷՓ ՀՈՑԿԱՉՆ

Ամերիկայի Միսիոնարուց Ընկերութեան հրատարակ,
Արտօնատէր Ճ. Ք. ԳՐԻՆ,
Տնօրէն—Խմբագիր Ա. Ֆ. ՀԱՐՈՒՐ
Ֆինճանճըլար Եպուլեան Ամերիկեան Տպարան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈՒԲ ՊՈՅԱՃԵԱՆ